ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՈՍԿՅԱՆՑ ԵՒ ՍՈՒՐԲ ՍՈՒՔԻԱՍՅԱՆՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՇՎԱԾ ՀԱՅՈՑ ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՎՈՐԸ, ԵՒ ՈՎՔԵ՞Ր՝ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԸ

«Ըստ յոլովից սովորութեան՝ կրկին ունելով անուանս...»
«Կամ միով անուամբ բազում թագաւորաց վարեալ...»
Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն,*
գիրք Բ., գլուխ ԻԴ. եւ ԺԳ.։

Հայոց պատմության համար այս հարցն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում՝ կասկած չթողնելու համար Սուրբ Ոսկյանց եւ Սուքիասյանց վկայաբանություններում[1] նկարագրվող իրադարձությունների պատմականության վերաբերյալ եւ լինելով վիճելի հարցերից մեկը։

Պատմագիտության մեջ Արտաշեսը[2] նույնացվում է Տրդատ Ա.-ի (66—88 թթ. կամ 61—75, 63— մոտ 80 թթ.) հետ՝ հիմնականում նկատի առնելով նրանց համար հայ եւ օտար աղբյուրներով ավանդվող նույն ժամանակաշրջանը եւ երկուսի վերաբերյալ հիշված պատերազմն ալանների դեմ։ Պատմիչներից ավանդված կենսագրության եւ գործունեության գերակշիռ մասով, սակայն, Արտաշեսը, համաձայն պատմագիտության մեջ ընդունված տեսակետի, միավորվում է Ք. ա. 189—160 թթ. գահակալած Արտաշես Ա.-ի հետ[3]։

---

[1] Մ. ՎՐԴ. ԱՒԳԵՐԵԱՆ, *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Բ., Վենետիկ, 1811, էջ 90—120 եւ 121—130.* Ղ. ՎՐԴ. ԱԼԻՇԱՆ, *Սոփերք հայկականք, ԺԹ., Վենետիկ, 1853, էջ 33—55 եւ 59—66. «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, Նաւասարդ ԺԷ., էջ լգ.—լը. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ* V—XV *դդ.», թարգմ.՝ Ա. Մադոյանի, Երեւան, 1998, էջ 213—216 եւ 217—229։*

[2] *Արտաշես թագավորին չենք նշում Բ. թվահամարով, ինչպես հայ պատմիչների ներկայացմամբ է՝ շփոթություն չառաջացնելու համար Տիգրան Մեծի թոռ Արտաշեսի հետ (Ք. ա. 30—20 թթ.), որն Արտաշես Բ. է ճանաչվում պատմագիտության մեջ։ Վերջինիս հայ պատմիչները չգիտեն, ինչպես եւ՝ Արտաշես Ա.-ին (Ք. ա. 189—160 թթ.), բայց որպես Արտաշես Ա. գիտեն Տիգրան Մեծի հորը եւ Արտաշես Բ.՝ մեզ հետաքրքրող թագավորին։ Նյութի ընդարձակության պատճառով նաեւ խուսափել ենք մեջբերումներից՝ նշելով միայն հղումները։*

[3] *Տե՛ս* Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ, *Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռովմայ 190էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ, 1912, էջ 25, ծանոթ. 3 եւ էջ 26.* Ա. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, *Քննական պատմութիւն Հայոց, հտ. Բ., Թիֆլիս, 1895, էջ 241—250.* Մ. ԱԲԵՂՅԱՆ, *Հայ*

Արտաշես թագավորի մասին հայկական սկզբնաղբյուրների, այդ թվում նաեւ Սուրբ Ոսկյանց եւ Սուրբ Սուքիասյանց վկայաբանությունների տեղեկությունները, սակայն, հնարավոր չեն դարձնում այս նույնացումները։ Վկայաբանությունների արժեքը նաեւ այն է, որ, ինչպես կտեսնենք, անկախ են հայ պատմիչներից, հետեւաբար՝ տեղեկությունների լրացուցիչ աղբյուր են։ Հունահռոմեական որոշ տեղեկություններ նույնպես այլ մեկնաբանության հնարավորություն են ընձեռում։

Ավելորդ չենք համարում համառոտ անդրադառնալ վկայաբանությունների մատուցած պատմական նյութին։ Սուրբ Ոսկյանք եւ Սուքիասյանք առաջին քրիստոնյաներից են, որոնք հավատքի համար նահատակվել են Հայաստանում։ Ոսկյանք հինգ դեսպաններ էին՝ հռոմեական կայսեր կողմից ուղարկված հայոց Սանատրուկ թագավորի մոտ[4]։ Հայաստանում նրանք դարձել են Սուրբ Թադեոս առաքյալի հետեւորդները, իսկ Սանատրուկ թագավորի կողմից առաքյալի նահատակությունից հետո ճգնակյաց ապրել են Եփրատի ակունքների մոտ գտնվող լեռներում, որոնց շրջակայքը Ծաղկե վայրի անունով հետագայում կոչվել է Ծաղկոտն[5]։ Նրանք Ոսկյանք (Ոսկյաններ) են կոչվել իրենց գլխավորի՝ Խոյուսիի կամ Խոյուսոսի անունով, որը հունարեն նշանակում է «ոսկի»[6]։ Ոս-

---

ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու պատմության մեջ, Երկեր, հտ. Ը., 1985, էջ 163–197. Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հտ. Ա., Երեւան, 1977, էջ 128–138, 344–345, հտ. Բ., Երեւան, 1978, էջ 16–18.* Գ. Սարգսյան, *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին, Երեւան, 1966, էջ 139–241. նույն հեղինակի՝ «Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը», ՊԲՀ, 1969, թիվ 1, էջ 107–126.* Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Ա., Ս. Էջմիածին, 2001, սյուն 17–20.* Եզնիկ Ծ. վրդ. Պետրոսյան, *Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա., Ս. Էջմիածին, 2000, էջ 16. «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Ա., Երեւան, 1971, էջ 531–538 եւ 762–763. «Հայ ժողովրդի պատմություն», ԵՊՀ հրատ., Երեւան, 1975, էջ 112–116. «Հայ ժողովրդի պատմություն», ԵՊՀ հրատ., Երեւան, 2012, էջ 47–48, 63 եւ այլն։*

[4] *«Վիպասատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 121։*

[5] *Ծաղկոտն, Ծաղկեոտն, Ոտն Ծաղկեոյ գավառը պատմական Հայաստանի Այրարատ նահանգի գավառներից է՝ տարածված Արեւելյան Եփրատի՝ Արածանիի վերին ավազանում։ Գավառի հարավում՝ Ծաղկանց, հյուսիսում Դիադինի լեռներն են։ Գլխավոր քաղաքն էր Զարեհավանը։*

[6] *Խոյուսոս անվան լատիներեն իմաստային համարժեքը Հ. Ղ. Ալիշանը համարում է Ավրելիոս անունը (լատ.՝* aurus—*ոսկի,* aureus—*ոսկյա. տե՛ս «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց», Վենետիկ, 1901, էջ 60)։ Ոսկյանց վկայաբանության նշումը, թե Խոյուսոսը «ազգաւ գռիկ» էր («Սոփերք», ԺԹ., էջ 60), կարելի է հասկանալ, որ պատկանում էր զինվորական դասին։ Լատիներեն* gregalis *նշանակում է հասարակ, նաեւ՝ զինվորական (*«Большой латин.-рус. словарь», http://linguaeterna.com/vocabula/search.php*), իսկ «ազգ» բառը գրաբարում ունի նաեւ դաս, սեռ, տեսակ իմաստները («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Ա., Վենետիկ,*

կյանք քարոզել եւ քրիստոնեական հավատքի են կոչել հայոց Արտաշես թագավորին՝ Սանատրուկի որդուն։ Նրանց ունկնդրելով՝ վերջինս ասել է, որ քրիստոնեության մասին շատերից է լսել, բայց այս հարցով զբաղվելը հետաձգել է՝ պատերազմի շտապելով արեւելքում։ Ոսկյանք քարոզել են նաեւ հայոց արքունիքում, թագուհուն՝ Սաթենիկին, արքայազուններին։ Նրանց քարոզչությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատացել ու մկրտվել են Սաթենիկի հետ Հայաստան եկած նրա ազգակիցները՝ ալան զորավարները։ Իրենց գլխավորի՝ մկրտությամբ ստացած Սուքիաս անունով նրանք կոչվել են Սուքիասյանք (Սուքիասյաններ)։ Տեղեկանալով, որ ալան զորավարները քրիստոնյա են դարձել, Արտաշեսի եւ Սաթենիկի կրտսեր որդիները՝ անվանված Վնոյն եւ Վրդոյն (կամ Վրոյն), այլ օրինակով՝ Վնոյն եւ Ջրոն, համախոհ դարձնելով իրենց ավագ եղբայր Արտավազդին՝ փորձում են Սուքիասյանց հետ դարձնել նախկին կռապաշտ հավատքին։ Մերժում ստանալով նրանցից՝ արքայազունները չարչարում են Ոսկյանց, որպեսզի նրանք տարհամոզեն իրենց աշակերտներին։ Վերջիններս պատասխանում են, որ Սուքիասյանք իրենք են ընտրել իրենց համար բարին։ Հայոց արքայազունները, խնայելով մոր կողմից իրենց ազգակիցներին, հրամայում են գլխատել Սուրբ Ոսկյանց։ Նրանց նահատակությունը տեղի է ունեցել Ք. հ. 107 թ. իրենց բնակության վայրում՝ Ծաղկոտն գավառի լեռներում, որտեղ ճգնել էին ավելի քան 43 տարի, քանի որ իրենց ճգնության 43-րդ տարում են մկրտել Սուրբ Սուքիասյանց[7]։

Սուրբ Ոսկյանց նահատակությունից հետո Սուրբ Սուքիասյանք, զրկված լինելով նաեւ իրենց ազգակից Սաթենիկ թագուհու բարեհաճ

1836)։ Որ այստեղ «ազգ»-ը հենց դաս իմաստով պետք է հասկանալ, երեւում է այլ օրինակում Ոսկյանց տրված բնորոշումից՝ որպես «ազնուականք, արքունի պաշտօնեայք, ազգաւ հռոմք կամ հոռոմք» («Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 121), իսկ «ազգաւ գռիկ»-ի փոխարեն մի տեղ հանդիպող «ազգաւ գռեհիկ»-ը ցույց է տալիս, որ թարգմանիչն օգտագործել է gregalis *բառի «հասարակ» իմաստը, սակայն հռոմեական դեսպանի համար տեղին է բառի «զինվորական» իմաստը։ Հռոմում Ավրելիոս անունը (=Խոյուսոս, =Ոսկի) կրել են անդամները գաղիական ծագումով մի ընտանիքի, որին պատկանում էր նաեւ Անտոնինոս Պիոս (Բարեպաշտ) կայսրը, որը գահակալել է Բ. դարում եւ դասվում է Անտոնինոսների շարքին, քանի որ որդեգիրն էր Ադրիանոս կայսեր։ Թեպետ ուղղակի կռվան չկա պնդելու, բայց Խոյուսոսի համար նշված հռոմեական դեսպան եւ զինվորական լինելու հանգամանքը հավանական է դարձնում նրա պատկանելությունն այդ ընտանիքին՝ նկատի առնելով, որ ծագումով գաղիացիները կայսրությունում իրենց ուղին պետք է սկսած լինեին զինվորությունից։*

[7] *Տես «Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 127 եւ 95.* ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ, *Հայոց պատմություն, Երեւան, 1996, էջ 38, 40 (գրբ.), 39, 41 (աշխրհբ.)։*

վերաբերմունքից, հեռանում են արքունիքից եւ միայնակյաց ապրում սկզբում Ոսկյանց ճգնավայրում, ապա՝ Բագրեւանդ գավառում[8]՝ Նպատ լեռան դիմաց՝ Ջրաբաշխ անվանված լեռներում, որոնք, համաձայն վկայաբանության, հետագայում Սուքիասյանց անունով կոչվել են Սուկավետ։ Տարիներ անց ալանների նոր՝ Դադիանոս (կամ Գիգիանոս) թագավորը լսելով, որ ազգությամբ ալան իշխանները Հայաստանում ապրում են անծանոթ հավատքով, զորավար է ուղարկում Հայաստան՝ նրանց գտնելու եւ վերադարձնելու հրահանգով։ Բառլահա (կամ Բարռախայել) անունով այս զորավարը Հայաստանում գտնում է Սուրբ Սուքիասյանց եւ զարմացած նրանց ճգնակեցության վրա՝ հարցնում, թե ովքեր են։ Սուրբ Սուքիասն իր մասին պատմում է, որ նախապես կոչվել է Բարաքաթրա, եղել է ալանների Շապուհ արքայի նիզակակիցը՝ երկրում երկրորդ գահն ունեցող իշխան[9]։ Բառլահան փորձում է համոզել նրանց թողնել քրիստոնեությունը, վերադառնալ հայրենիք, որտեղ կհաստատվեն նախկին դիրքում ու պատվի մեջ։ Մերժում ստանալով՝ նա տանջանքների է մատնում սրբերին եւ ապարդյուն ջանքերից հետո հրամայում սպանել։ Վկայաբանության համաձայն՝ Սուրբ Սուքիասյանք նահատակվել են 130 կամ 140 թթ.[10]։

Սուրբ Ոսկյանց վկայաբանությունը նշում է, որ Սուքիասյանները Ջրաբաշխ լեռներում ճգնել են 46 տարի. նրանցից սպանվել են մոտ տասնհինգը, թաքնվելով փրկվել երկուսը[11]։ Սուրբ Սուքիասյանց վկայաբանությունում նրանց ճգնության ժամանակը նշված է 44 տարի, Սուքիասյանք անվանապես հիշված են տասնինը, որոնցից երկուսը՝ փրկվածները[12]։ Վերջիններս, տեղափոխվելով քիչ հեռու մի վայր, հետո վերադարձել եւ կոթող են կանգնեցրել ընկերների նահատակության տեղում, քանի որ սպանողները նրանց մարմինները նետել էին ձորը։ Տարիներ անց վախճանվել են նաեւ նրանք, եւ մարմինները գտնողները թաղել

---

[8] *Բագրեւանդը Այրարատ նահանգի գավառներից էր՝ տարածված Արեւելյան Եփրատի՝ Արածանիի եւ Արաքսի ակունքների շրջանում, գլխավոր քաղաքն էր Բագարանը։*

[9] *Տե՛ս «Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 100. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ V–XV դդ.», էջ 221. «Սոփերք», ԺԹ., էջ 41. «Յայսմաւուրք», էջ լը։*

[10] *Տե՛ս «Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 109։*

[11] *Տե՛ս «Սոփերք», ԺԹ., էջ 63–64. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ V–XV դդ.», էջ 215։*

[12] *Տե՛ս «Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 91. «Սոփերք», ԺԹ., էջ 55. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ V–XV դդ.», էջ 229. «Յայսմաւուրք», էջ լէ։*

են տեղում։ Կարճ ժամանակ անց մոտակայքում հայոց Վաղարշ թագավորը կառուցել է Վաղարշակերտ քաղաքը[13]։

Ոսկյանց վկայաբանության «Սոփերք»-ի տարբերակում նշված է սկզբնաղբյուրը։ Հեղինակն ասում է, որ Հունաստանում («ի կողմանս Յունաց») գտել է Տատիանոսի ճառերի մի գիրք, որից վերցրել է Սուրբ Ոսկյանց եւ Սուքիասյանց մասին պատմությունը[14]։ Տատիանոսը քրիստոնյա ջատագով հեղինակներից է, ենթադրվում է, որ ծագումով Ասորիքից (Սիրիա) էր, ապրել եւ գործել է Բ. դարում (մահն ընդունվում է 185 թ.)։ Հռոմում եղել է Հուստինոս վկայի աշակերտներից, հայտնի է, որ շատ է շրջագայել, կյանքի վերջում տեղափոխվել է Արեւելք։ Հեղինակն է «Դիատեսարոն»-ի (որում համադրաբար շարադրել է չորս Ավետարանների նյութը) եւ այլ գործերի, որոնց մասին հիշատակում են Սուրբ Կղեմես Ալեքսանդրացին (Բ.—Գ. դ.), Եւսեբիոս Կեսարացին (Գ.—Դ. դ.), իսկ Սուրբ Հերոնիմոսի համաձայն (Դ.—Ե. դ.)՝ «Տատիանոսը գրել է անհամար թվով գրքեր»[15]։ Ջատագով հեղինակը, փաստորեն, հավաքել եւ իր ճառերում օգտագործել է նաեւ քրիստոնեական նահատակների վարքեր։ Տատիանոսին մոտ 30 տարի է բաժանում Սուրբ Սուքիասյանց նահատակության ժամանակից։ Սուրբ Ոսկյանց եւ Սուքիասյանց վկայաբանություններին նա հավանաբար ծանոթացել է Հայաստանին հարակից Ասորիքում (գուցե եւ՝ Հայաստանում)։ Հայտնի է, որ արդեն առաքելական շրջանից քրիստոնեության տարածման իրադարձությունները, նաեւ նահատակությունների պատմությունները գրի էին առնվում հավատքի քաջալերության համար եւ պահվում քրիստոնեական համայնքներում, ինչպես եւ փոխանցվում այլ համայնքների[16]։ Վկայաբանության նյութի

---

[13] Հայոց Վաղարշ Բ. Արշակունի թագավորը՝ գահակալած Ք. հ. 186—196 թթ., ըստ Մովսես Խորենացու՝ 191—211 թթ.։ Վաղարշակերտ քաղաքի անունն աղավաղված՝ Ալաշկերտ ձեւով տարածվել է շրջակա դաշտավայրի վրա։

[14] Տե՛ս «Սոփերք», ժթ., էջ 59. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ V—XV *դդ.», էջ 213. «Վիակատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 129, ծանոթ. 2։*

[15] Иероним Стридонский, О знаменитых мужах, гл. 29. «Подвижники. Избранные жизнеописания и труды», Книга вторая, Самара, 1999, с. 195.

[16] Այդ մասին հնագույն հիշատակություններից մեկը պահպանվել է «Ադդայի վարդապետության» ասորերեն օրինակում, որտեղ ասվում է, որ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս առաքյալը (Տյառնեղբայրը՝ նահատակված Ք. հ. 62 թ.) գրի առավ Քրիստոսի Խաչափայտը գտնելու իրադարձությունները եւ ուղարկեց մյուս առաքյալներին, ինչպես եւ առաքյալները «տեղյակ էին պահում, թե ինչ արեց Քրիստոս իրենց միջոցով» (ռուսերենը տե՛ս Е. Мещерская, Легенда об Абгаре, Москва, 1984, *էջ 188—191, նույն հեղինակի՝* «Апокрифические деяния апостолов, Москва», 1997, *էջ 83—87)։ Կլավդիոս Ա. կայսեր*

նախնական՝ հին շերտի մասին է խոսում Բարլահա (կամ Բարռախայել) անվանը տրված «դրախտ Աստծու» բացատրությունը[17], որը պահպանվել է «Յայսմաւուրքի» տարբերակում, նաեւ՝ Քոյուսի կուռքի մասին տեղեկությունը, որ մնացել է Թովմա Արծրունու երկում[18]։

Սուքիասյանց մասին մեր պատմիչներից առաջինը հիշատակում է Թովմա Արծրունին, սակայն սա չի նշանակում, որ մինչեւ Թ. դարավերջ Սուքիասյանց եւ Ոսկյանց վկայաբանությունները հայերեն գոյություն չեն ունեցել։ Սրբոց վարքերի՝ իբրեւ պատմական գործերի առկայության պայմաններում պատմիչները միշտ չէ, որ պարտավորված են զգացել կրկնել դրանց նյութը եւ կամ հիշատակել են համառոտ։ Ղեւոնդ Ալիշանի կարծիքով՝ Սուրբ Ոսկյանց եւ Սուքիասյանց մասին Մովսես Խորենացին «Հայոց պատմության» մեջ չի հիշատակում, քանի որ նրանց վկայաբանությունները հայերեն ինքն է առանձնացված շարադրել ըստ Տատիանոսի[19]։ Ոսկյանց մասին անուղղակի հիշատակություն է Փավստոս Բուզանդի այն տեղեկությունը, որ Գինդ վարդապետը (Դ. դարավերջ) ճգնակյաց ապրում էր Եփրատի ակունքներում, որտեղ ճգնել էր նաեւ Գրիգոր Լուսավորիչը, եւ վայրը կոչվում էր Ոսկիք[20]։ Սրբերին հա-

---

օրոք (Ք. հ. 41–54 թթ.) Տիրոջ Խաչափայտի գյուտի մասին պատմող այս հատվածը հայերեն օրինակում չկա, սակայն լիարժեք համապատասխանությամբ առկա են Խաչափայտի պատմությունից վերեւ եւ ներքեւ եղող նախադասություններն ու միտքը, որ «Հակոբոսը՝ Երուսաղեմի Եկեղեցու առաջնորդը, որ իր աչքով էր տեսել այս դեպքերը, գրեց եւ տվեց տանելու իր ընկեր առաքյալներին՝ բոլորին աշխարհում եւ քաղաքներում, որ շրջակայքում էին։ Եւ նրանք իսկ՝ առաքյալները, ընկերակիցները նրա, գրում եւ ցույց են տալիս նրան՝ Հակոբոսին, ամենը, ինչ կատարում էր Քրիստոս նրանց ձեռքով. եւ ընթերցում ու պատմում էին ժողովրդի առաջ» (գրբ. փոխադր.՝ ճեղինակի). տե՛ս Ղեբուիբնա Եդեսացի, *Թուղթ Աբգարու թագաւորի հայոց եւ քարոզութիւն Սրբոյ Թադէի առաքելոյ, Երուսաղէմ, 1868, էջ 13։ Սա ցույց է տալիս, որ Տիրոջ Խաչափայտի գյուտի պատմությունը Սուրբ Թադեոսի քարոզության («Ադդայի վարդապետության») հայերեն օրինակում նախապես եղել է նույն տեղում։ Այն, հավանաբար, առանձնացրել են Սուրբ Խաչին նվիրված տոնին ավելի հարմար ձեւով օգտագործելու նպատակով։ «Յայսմաւուրքում» այն ներառված է Վարագա Սուրբ Խաչի տոնի ներքո՝ որպես նախապատմություն Սուրբ Հռիփսիմեի կողմից Խաչափայտի մասունքի Հայաստան բերվելու եւ Վարագա լեռան վրա պահելու պատմության (տե՛ս «Յայսմաւուրք», էջ գճղա)։*

[17] Տե՛ս «Յայսմաւուրք», էջ լը։ Բար-ռախ-էլ բառամասերը տարբերակելով՝ ավելի ճիշտ է՝ «պտուղ (կամ որդի) դրախտի Աստծու»։

[18] Տե՛ս Թովմա Արծրունի, *Պատմութիւն տանն Արծրունեաց, դպր. Ա., գլ. Ը., Կ. Պոլիս, 1852, էջ 57–58, աշխրհբ.՝ Երեւան, 1978, էջ 75։*

[19] Տե՛ս Ղ. վրդ. Ալիշան, *Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1901, էջ 66։*

[20] Տե՛ս Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն, դպր. Զ., գլ. ԺԶ., Երեւան, 1987, էջ 414 (գրբ.), էջ 415 (աշխրհբ.)։*

մառոտ հիշում է նաեւ Հովհաննես Դրասխանակերտցին[21] (Ժ. դ.)՝ նշելով, որ Ոսկյանք Սուքիասյաններին մկրտել են իրենց քարոզչության 43-րդ տարում։ Թովմա Արծրունին նույնպես համառոտ է հիշատակում, որ Սուքիասյանք՝ Սաթենիկ թագուհու համերկրացիները, քարոզել են արքունիքում, բայց Սաթենիկը չի հրաժարվել Աստղիկի պաշտամունքից։ Այս հիշատակությունն էլ ծնունդ է առնում խոսքի բերումով, երբ նա ընդարձակ պատմում է Արտաշեսի կողմից Վանա լճի արեւելյան կողմում Արտամատ (Արտամետ) քաղաքի կառուցման, այնտեղ Աստղիկի արձանը կանգնեցնելու եւ քաղաքը Սաթենիկին նվիրելու մասին։ Սուքիասյանց վերաբերյալ համառոտ պատմելով հանդերձ՝ Թովմա Արծրունին պահպանել է ուշագրավ հիշատակություն այն մասին, որ Սուքիասյանք իրենցից մեկին ուղարկեցին (պետք է ենթադրել՝ Արտամատ) բացատրելու, որ անտեղի եւ սին է Քոյուսի կուռքի պաշտամունքը։ Եթե պատմիչի աղբյուրը Սուրբ Սուքիասյանց նախնական վկայաբանությունն է, ապա ենթադրելի է, որ այն բավական ընդարձակ է եղել։ Եւ իրոք, Տատիանոսի ճառերը պարունակող մատյանի մասին այն թարգմանողը (կամ ըստ այդմ շարադրողը) հայտնում է, որ այդտեղ գրվածի վերաբերյալ «անթիւ շատաբանութեամբ» (առատախոսությամբ) զրույցներ գոյություն ունեն նաեւ Հայաստանում[22]։ Դրանք պետք է որ պահպանված լինեին նաեւ գրավոր, եթե Թովմա Արծրունին դարեր անց օգտագործել է՝ հաղորդելով Արտամատի կառուցման եւ Քոյուսի կուռքի մասին, որի պաշտամունքը Սուքիասյանք հորդորել են անիմաստ համարել՝ դիմելով ինչպես իրենց ազգակից Սաթենիկ թագուհուն, ում նվիրված էր քաղաքը, այնպես եւ վերջինիս բնակիչներին։

Ինչ վերաբերում է կուռքի անվանը, կարծում ենք, որ այն Քոյուսի=Խոյուսի է կոչված ոսկուց պատրաստված լինելու պատճառով եւ նվիրված է եղել Աստղիկ աստվածուհուն, որի արձանը կանգնեցված էր Արտաշեսի նորակառույց Արտամատ քաղաքում։ Աստղիկին նվիրված ոսկե կուռքի անունը Ոսկյանց գլխավորի՝ Խոյուսիի անվան հետ կապ ունի այնքանով, որքանով երկուսն էլ բխում են հունարեն «ոսկի» բառից։

---

[21] Տե՛ս ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ, *Հայոց պատմություն*, էջ 38, 40 (գրբ.), 39, 41 (աշխրհբ.)։

[22] Տե՛ս «Սոփերք», ԺԹ., էջ 59։ Այստեղ Տատիանոսի գործունեությունը նշված է Վաղենտինիանոս, այլ օրինակում՝ Հուստինիանոս կայսեր օրոք, որը Ղ. վրդ. Ալիշանն ուղղում է Հուստինոսի՝ նկատի ունենալով Տատիանոսի ուսուցիչ Սուրբ Հուստինոսին (տե՛ս «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց», էջ 60 եւ 67)։

Հայտնի է, որ մինչ այդ հայոց թագավորները պղնձե-ոսկեպատ կուռքեր էին բերել հելլենիստական քաղաքներից։ Հայաստանում նույնպես ձուլվում էին հեթանոս աստվածների արձաններ[23]։ Վկայաբանության հեղինակը, քրիստոնյա լինելով, կարեւորություն չի տվել, թե որ աստվածությանն է նվիրված հիշյալ կուռքը, որն իր համար չաստվածություն էր՝ պարզապես նյութ, եւ անվանել է ըստ նյութի՝ Քոյուսի (Խոյուսի) կուռք, այն է՝ Ոսկե կուռք։ Սա ցույց է տալիս, որ վկայաբանությունը նախապես գրվել է հունարեն եւ ենթադրելի է՝ սրբերի նահատակությունից շատ չանցած, եթե երեք տասնամյակ անց այն օգտագործել է Տատիանոսը։ Կարելի է մտածել, որ «Սոփերք»-ի օրինակը Տատիանոսի համառոտ շարադրածն է, իսկ ընդարձակը պահվել եւ շրջանառվել է առանձին, ներմուծվել է «Յայսմաւուրք», Ճառընտիրներ, եւ դրանց ծանոթ են եղել հայ պատմիչները։ Վարքերն ու վկայաբանություններն իբրեւ պատմական գրվածքներ ընդունելով՝ պատմիչները, ինչպես ասացինք, չեն կրկնել դրանց նյութը, այլ հիշել են համառոտ՝ իրենց շարադրանքի հետ առնչված[24]։

Այն, որ Սրբոց Ոսկյանց եւ Սուքիասյանց վկայաբանությունները գրի են առնվել նախքան Մաշտոցյան գրի ստեղծումը եւ հայոց պատմիչների հանդես գալը, հավաստում է նաեւ Սուքիասյանց վկայաբանության «Սոփերք»-ի օրինակում կատարված ընդմիջարկումը, որը ժամանակագրական հակասություն է բերել։ Ինչպես դիտարկել է Հ. Մկրտիչ Ավգերյանը[25], հետագա ընդօրինակող կամ վերաշարադրող վարքագիրը շփոթել է ալանների Շապուհ թագավորին պարսից թագավոր Շապուհ Ա.-ի հետ։ Վկայաբանության սկզբում ասված է, որ սրբերը խոտաճարակ դարձան Շապուհ թագավորի ժամանակ՝ առանց նշելու, թե ո՛ր երկրի Շապուհ թագավորի։ Շարունակության մեջ եւ մյուս օրինակնե-

---

[23] *Այս մասին տե՛ս Բ. Առաքելյան, Քանդակագործությունը հին Հայաստանում, ՊԲՀ, 1969, թիվ 1, էջ 52–67։*

[24] *Պատահական չէ, որ Փավստոս Բուզանդը «Հայոց պատմությունը» սկսում է Գ. դպրությունից (կամ գրքից)՝ հիմնավորելով, որ Հայաստանում Սուրբ Թադեոս առաքյալի քարոզության (Ա. դարի դեպքեր), նաեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ Սուրբ Տրդատ Գ. թագավորի գործունեության մասին (Գ. դարի դեպքեր) արդեն գրված են։ Այսինքն՝ Սուրբ Թադեոս առաքյալի, նրա աշակերտների եւ, բնականաբար, ժամանակի արքաներ Սանատրուկի ու Արտաշեսի մասին վարքագրական գրականությունն ընկալված է Հայոց պատմության Ա. դպրություն, իսկ Սուրբ Գրիգորի եւ Սուրբ Տրդատի վերաբերյալ Ագաթանգեղոսի շարադրանքը (անշուշտ՝ նախնականը)՝ Բ. դպրություն։*

[25] *Տե՛ս «Վիճակատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 113–114, ծանոթ. 2։*

րում տեսանելի է, որ խոսքն ալանների Շապուհ թագավորի մասին է, որի նիզակակիցն էր Սուրբ Սուքիասը, ինչպես եւ ինքն ասում է Բառլահային[26]։ Հետագա ընդօրինակողը կամ վերաշարադրող վարքագիրը, Շապուհ անվանը հանդիպելով, շարադրանքը տեղափոխել է մեկ դար հետո եղած իրականություն՝ հիշատակելով պարսից Արտավան թագավորի սպանությունը (Ք. հ. 226 թ.), հայոց Խոսրով թագավորի սպանությունը (Ք. հ. 252 կամ 259 թ.), պարսկական զորքի արշավանքը Հայաստան, ժողովրդի նեղյալ վիճակը, եւ այս ժամանակավրեպ հավելումով միավորել վկայաբանության այն մասի հետ, թե Սուքիասյանք աղոթում էին Հայաստանի խաղաղության համար[27]։ Շփոթեցնողը, այսպիսով, Շապուհ անունն է, որը հասկացվել է պարսից թագավորի համար ասված (Շապուհ Ա.-ի՝ Ք. հ. 242–273 թթ. կամ 239–274 թթ.)՝ փոխարեն ալանների արքայի։

Հարկ է անդրադառնալ, որ հայոց Խոսրով Մեծ թագավորի դավադրաբար սպանության դրվագներում հայ պատմիչների կողմից պարսից թագավորը հիշատակված է Արտաշիր անունով եւ միայն Ագաթանգեղոսի գործում՝ «պարսից թագավոր» ձեւով[28]։ Նույնիսկ Հովհաննես Դրասխանակերտցին, որը հետեւելով Սուքիասյանց վկայաբանության մեջ մուծված հիշյալ շփոթմունքին, կարծում է, թե Սուքիասյանք նահատակվել են Խոսրով Մեծի սպանությունից հետո, այնուամենայնիվ, վերջինիս սպանության դրվագում պարսից թագավորին Արտաշիր է կոչում՝ համաձայն իրեն նախորդած հայ պատմիչների։

Տվյալ պարագայում նույնիսկ էական չէ՝ արդյոք հայ պատմիչները Սասանյան Արտաշիր Ա.-ի (Ք. հ. 224–242 թթ. կամ 224–239 թթ.) իշխանության ժամանակաշրջանն են երկար պատկերացնում, թե՞ նկատի ունեն նրա թոռանը՝ Խոսրով Մեծի սպանությունից հետո Հայաստանը նվաճած Որմիզդ-Արտաշիրին՝ Շապուհ Ա.-ի որդուն, որը նաեւ թագավոր կարգվեց

---

[26] *Տե՛ս «Սոփերք», ԺԹ., էջ 34. «Հայկական վարքեր եւ վկայաբանություններ», էջ 217 եւ 221. «Յայսմաւուրք», էջ լը։*

[27] *Տե՛ս «Սոփերք», ԺԹ., էջ 37–41։*

[28] *Տե՛ս* Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն, Բ., Երեւան, 1983, էջ 28 (գրբ.), 29 (աշխրհբ.).* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. կէ.–ՀԴ., Տփղիս, 1913, էջ 196–222, աշխրհբ.՝ Երեւան, 1990, էջ 134–146.* Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն, գլ. Բ., Երեւան, 1982, էջ 8 (գրբ.), 9 (աշխրհբ.).* Հովհաննես Դրասխանակերտցի, *Հայոց պատմություն, էջ 40 (գրբ.), 41 (աշխրհբ.).* Ստեփանոս Տարօնեցի, *Պատմութիւն տիեզերական, հնդս. Ա., գլ. Ե., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 52.* Վարդան Արեւելցի, *Տիեզերական պատմություն, Երեւան, 2001, էջ 46 (գրբ.), 71 (աշխրհբ.)։*

Հայաստանում (Ք. հ. 261/262–272 թթ. կամ 260–274 թթ.)[29], իսկ այնուհետեւ Սասանյան գահին հաջորդեց հորը։ Մեզ հետաքրքրող հարցում կարեւորն այն է, որ վկայաբանության մեջ հավելում կատարողը Խոսրով Մեծի սպանության դեպքում՝ 250-ականներին պարսից արքային գիտի Շապուհ անվամբ (այսինքն՝ ճիշտ), մինչդեռ հայոց պատմիչները կա՛մ Արտաշիր են կոչում նրան, կա՛մ ուղղակի՝ պարսից թագավոր։ Ակնհայտ է, որ վկայաբանության հետագա այդ ընդօրինակողը, որը շփոթել է ալան եւ պարսից Շապուհներին եւ ներմուծել հավելումը, անկախ է հայ պատմիչներից։

Այս իրողությունը ենթադրում է վկայաբանության սկզբնական օրինակի առավել նախնականություն եւ, բնականաբար, անկախություն հայոց պատմիչներից։ Տեղին է նկատել, որ Սուքիասյանց վկայաբանությունը, հաղորդելով, որ սրբերը խոտաճարակ դարձան Շապուհ թագավորի ժամանակ, փաստորեն, ժամանակագրությունը նշել է ալանների արքա-

---

[29] *Ս. Երեմյանը կարծիք է հայտնել, որ Մովսես Խորենացու Բ. գրքի ՀԶ. գլխում հիշված Արտաշիրը, որ գործել է Վալերիանոս կայսեր (253–260 թթ.) եւ նրան կարճատեւ գահակալությամբ հաջորդած Կլավդիոս Բ., Ավրելիանոս, Տակիտոս, Փլորիանոս կայսրերի շրջանում, չի կարող լինել Սասանյան Արտաշիր Ա.-ն, այլ՝ նրա թոռ եւ Շապուհ Ա.-ի որդի Որմիզդ-Արտաշիրը (տե՛ս* Ս. Երեմյան, *Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբ ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, թիվ 2, էջ 66–67)։ Մովսես Խորենացին, սակայն, այս անձին հիշում է սկսած Բ. գրքի ՀԲ. գլխից, երբ պատմում է Փիլիպոս Արաբացի կայսեր (244–249 թթ.) օրերից ի վեր Սասանյան Իրանի հարձակումների դեմ հայոց Խոսրով թագավորի պայքարի եւ նրա դավադրաբար սպանության մասին։ Ս. Երեմյանի դիրքորոշումը տարածելով նաեւ Մովսես Խորենացու Բ. գրքի ՀԲ.–ՀԵ. գլուխների վրա՝ արդարացված է մտածելը, որ Հայաստանի նվաճումը Շապուհ Ա.-ն հանձնարարել էր իր ավագ որդուն՝ Որմիզդ-Արտաշիրին, եւ նրա անունն է պահպանվել Խոսրովի սպանության դեպքում։ Ուշագրավ է, որ վրաց տարեգրության հայերեն թարգմանությունը, պատմելով վրաց թագավոր Ասպարագուրի կողմից հայոց թագավոր Խոսրովին ցույց տված օժանդակության եւ հաջորդող դեպքերի մասին, Խոսրովի սպանությունը նույնպես վերագրում է Սասանյան Քարսե-շարվանին կամ Արտաշիրին, որն այնուհետեւ գրավել է նաեւ Վրաստանը (տե՛ս* Ջուանշեր, *Համառօտ պատմութիւն վրաց, գլ. Է., Վենետիկ, 1884, էջ 39–40)։ Անվան Քարսե-շարվան ձեւը վկայում է, որ տեղեկությունը բնագրային է, եւ հավանական է, որ հայոց եւ վրաց աղբյուրները նկատի ունեն Հայաստանն ու Վրաստանը նվաճած Որմիզդ-Արտաշիրին։ Վրաց տարեգրության վրացերեն տարբերակում (Քարթլիս ցխովրեբա) Հայաստանն ու Վրաստանը նվաճած Սասանյանն անվանված է Քարսե՝ հայերենի համառոտված ձեւով (թարգմ. տե՛ս* Л. Мровели, Жизнь Картлийских царей, Москва, 1979, *էջ 37), մեկ այլ տարբերակում նա կոչված է Խոսրով՝ ճշտումով, որ Արտաշիրն է։ Այստեղ իբրեւ պատվանուն առկա Անուշիրվան անունը, անշուշտ, հետագա ներմուծում է՝ ծագած Խոսրով Անուշիրվան արքայի (Զ. դ.) պատվանունից (տե՛ս* «Картлис цховреба», Тбилиси, 2008, *էջ 37–38)։ Հարցն այն է, որ եւ՛ Շապուհ Ա.-ն, եւ՛ նրա որդիները՝ նաեւ Որմիզդ Արտաշիրը, որոնք թագավորել են նվաճած երկրներում եւ Իրանի տարբեր հատվածներում, կրել են նաեւ Խոսրով պատվանունը, ինչպես վկայում է Շապուհ Ա.-ի Նախշ-ի-Ռուստեմի արձանագրությունը (տե՛ս* A. Maricq, Classica et Orientalia, “Syria”, 1958, v. 35, էջ 316–317, https://www.persee.fr/doc/syria_0039-7946_1958_num_35_3_5332*)։*

յի միջոցով, ինչը հնարավոր է դարձնում մտածել, որ վկայաբանության նախնական օրինակը կարող էին գրել նահատակությունից փրկված երկու՝ ազգությամբ ալան սրբերը, կամ այն գրի է առնվել ըստ նրանց պատմածի[30], մանավանդ որ վկայաբանության մեջ Սուքիասյանները նշված են անվանապես, ներկայացված են երկխոսություններ, նահատակության մանրամասներ։ Այսպիսով, առավել հավանական է, որ Տատիանոսն ունեցել է գրավոր սկզբնաղբյուր, որը պահվել եւ հայտնի է եղել հայ պատմիչներին։ Հետագայում հավելվել է Դ. դարում Սուրբ Գրիգոր Լուսավորչի (302–325 թթ.) կողմից սրբերի նշխարները գտնելու, տեղում վանք կառուցելու եւ իր աշակերտներից Աբաս եպիսկոպոսին վանահայր կարգելու, նաեւ՝ Կոստանդիանոս Ա. կայսեր (305–337 թթ.) այցի եւ իր հետ մասունքներ տանելու մասին պատմող վերջավորությունը[31]։

Վկայաբանության անկախությունը հայ պատմիչներից էական դեր ունի տեղեկությունների գնահատման առումով։ Էական է նաեւ, որ վկայաբանությունը նպատակ չունի ներկայացնելու հայոց պատմություն, այլ՝ սրբերի կյանքն ու նահատակության հանգամանքները, սակայն մատուցում է հարակից տեղեկություններ, որոնք կարեւոր են այլ տեղեկությունների հետ համադրվելու համար։

Վկայաբանություններում նկարագրված դեպքերի ժամանակաշրջանը վերաբերում է Հայաստանում Սուրբ Թադեոս առաքյալի քարոզչության եւ նահատակության, նրան աշակերտած Սուրբ Ոսկյանց ճգնության առնվազն 43 եւ Ս. Սուքիասյանց ճգնության 44 տարիներին։ Ս. Թադեոս առաքյալի նահատակության տարին ուղղակիորեն ավանդված չէ, բայց Սուրբ Ոսկյանց նահատակության 107 թվականից դուրս բերելով նրանց

---

[30] *Այսպես մտածել է նաեւ ընդօրինակող վարքագիրներից մեկը (արդյոք որերո՞րդը). տե՛ս «Վիակատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 111–112։*

[31] *Կոստանդիանոս Ա. կայսեր այցը Հայաստան Հ. Մ. Ավգերյանը կասկածելի է համարում. տե՛ս «Վիակատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 118–120, ծանոթ. 10։ Այցի մասին հունահռոմեական տեղեկությունների բացակայությունը, սակայն, հարցը չի փակում. շատ հավանական է, որ Ե. դարում՝ Ընդհանրական Եկեղեցու դավանաբանական բաժանումից հետո, Հայաստանից բերված սրբերի նշխարների մասին տեղեկությունները ժամանակի ընթացքում խմբագրվել-ջնջվել են։ Սրբերի նշխարների միմյանց փոխանցումը, սակայն, բնական, ընդունված եւ շատ տարածված էր Եկեղեցու միասնականության առաջին դարերում, նաեւ Դ. դարի իրականության մեջ։ Սուրբ Սուքիասյանց նշխարները գտնող Ս. Գրիգոր Լուսավորիչը եւ հայոց Տրդատ թագավորը ժամանակակից են Կոստանդիանոս Ա.-ին։ Անհավանական չէ, որ նահատակ սրբերի նորագյուտ նշխարներից մաս ունենալու կայսեր ցանկությանը նրանք ուրախությամբ ընդառաջել են՝ փոխանցելով մասունքները գուցե կայսերը, գուցե կայսեր ներկայացուցիչներին։*

ճգնության առնվազն 43 տարին (երբ մկրտեցին Սուքիասյանց) կամ եւս 1–2 տարի՝ կարող ենք ընդունել, որ Արտազում Ս. Թադեոսի նահատակությունը տեղի է ունեցել Ք. հ. 60-ականների սկզբում (62 թ. կամ 63 թ.)։ Ոսկյանց նահատակությունից 44 տարի անց Սուքիասյանց նահատակությունը, սակայն, կստացվի ոչ թե 130 կամ 140 թ., ինչպես վկայաբանությունն է ավանդում, այլ մեկ տասնամյակ հետո՝ 150 թ.։ Հավանական է, որ 130 կամ 140 թվական նշողն ընդօրինակելիս հանդիպել է գրի անհստակության եւ ենթադրաբար երկու տարբերվ ցույց տվել։ Ստորեւ կտեսնենք, որ Սուքիասյանք ողջ են եղել 140 թ. եւ հաջորդած մոտակա տարիներին, երբ պարթեւական Վաղարշ Բ. թագավորն արշավանք է ձեռնարկել դեպի Հայաստան։ Այս արշավանքի եւ դրա հետ կապված հանգամանքների հիշատակությունը Սուքիասյանց վկայաբանության մեջ ժամանակագրական հանգուցակետ է, որը նույնպես որոշակիացնում է Արտաշես թագավորի եւ նրա որդիների ապրած ժամանակաշրջանը։

ԱՐՏԱՇԵՍԻ ՈՐԴԻ ՏԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուքիասյանց վկայաբանության հաղորդմամբ՝ երբ պարթեւական Պերոզ թագավորն արշավանք է ձեռնարկել դեպի Հայաստան, սրբերն աղոթել են երկրի խաղաղության համար, եւ պարսից արքան հետ է դարձել։ Դեպքերի հանգամանքները նշված են հետեւյալ կերպ. երբ մահացել է հայոց արքա Արտաշեսը, մահացել է նաեւ պարսից արքան՝ «պարսից Արտաշեսը» (ստորեւ կտեսնենք, թե ով է այս թագավորը)։ Հայոց Արտաշեսին փոխարինել է որդին՝ Արտավազդը, պարսից Արտաշեսին՝ Պերոզը։ Հայոց գահին Արտավազդին հաջորդել է Տիրանը՝ Արտաշեսի մյուս որդին, եւ նրա օրոք է Պերոզն արշավանք ձեռնարկել դեպի Հայաստան, քանի որ, ինչպես բացատրում է վկայաբանությունը, Հռոմի Անտոնինոս Պիոս կայսրը թագ եւ ծիրանի էր ուղարկել Տիրանին՝ հավատարիմ մնալու եւ հարկը վճարելու համար։ Արշավանքի պատճառով նեղության մեջ հայտնված հայ ժողովրդի համար սրբերն աղոթել են, եւ Տերը, լսելով նրանց, «դարձրեց պարսից արքային այդտեղից իր երկիրը, քանի որ հասավ նրան պատգամը սպառնալիքների հռոմեացիների կայսրից, ում ապավինել էր հայոց արքան»[32] (գրբ. փոխադր.— Ա. Ա.)։

[32] *«Վիկատար վարք եւ վկայաբանութիւն», հտ. Բ., էջ 95–96։*

Դեպի Հայաստան պարթեւ թագավորի ձեռնարկած, բայց անավարտ մնացած այս արշավանքի մասին խոսում է նաեւ Անտոնինոս Պիոս (Բարեպաշտ) կայսեր (138–161 թթ.) վարքագիր Հուլիոս Կապիտոլինուսը (Գ. դար)՝ ասելով, որ «միայն նամակով կայսրը հետ պահեց պարթեւական թագավորին հայերի վրա հարձակումից»[33] (ռուս. թարգմ.– Ա. Ա.)։ Հուլիոս Կապիտոլինուսը չի նշում, թե պարթեւական որ թագավորի արշավանքն է կանխվել Անտոնինոս կայսեր նամակով, եւ երբ է դա տեղի ունեցել։ Սա հնարավոր է դարձրել արշավանքի վերագրումը նաեւ Վաղարշ Գ.-ին (147/148–192)[34], որի իշխանության առաջին 14 տարիները նույնպես համընկնում են Անտոնինոս Պիոսի գահակալության հետ։

Հայագիտության մեջ դեպի Հայաստան պարթեւական արշավանքի եւ Անտոնինոս Պիոսի նամակով այն դադարեցնելու մասին Կապիտոլինուսի տեղեկությունը վերագրվում է Վաղարշ Բ.-ին (105–147 թթ.), իսկ արշավանքը համարվում է նախաձեռնված 140–143 թթ. միջեւ։ Արշավանքի տարեթիվը որոշելու հիմք են դարձել Անտոնինոս Պիոս կայսեր՝ այդ տարիներին վերաբերող դրամները, որոնց վրա պատկերված է, թե ինչպես է կայսրը պսակ դնում հայոց թագավորի գլխին, եւ մակագրված՝ «տրվեց թագավոր հայերին՝ հրամանով Ծերակույտի»։ Դրամների վրա պատկերված թագավորն ընդունված տեսակետով ենթադրաբար համարվում է հունահռոմեական աղբյուրներից ծանոթ Սոհեմոսը՝ հիշված պարթեւահռոմեական 161–166 թթ. տեղի ունեցած պատերազմի առնչությամբ, երբ հռոմեացիների կողմից կրկին բարձրացվեց հայոց գահին[35]։ Նա համադրվում է Արտաշեսի գահակալած 3-րդ որդու՝ Տիգրանի հետ, որի մասին Մովսես Խորենացին նույնպես ասում է, որ Անտոնինոս Պիոսի մահվան տարում, այսինքն՝ 161 թ. սկսված պարթեւահռոմեական պատերազմի արդյունքում Լուկիոս Վերոսի կողմից կրկին բարձրացվեց հայոց գահին[36]։ Սոհեմոսի կամ Տիգրանի այս երկրորդ գահակալությունը տեղի է ունեցել 164 թ., սակայն նրա

---

[33] Юлий Капитолин, Антонин Пий, IX, 6. *տե՛ս* «Властелины Рима», Москва, 2006, *էջ 548։*

[34] *Տե՛ս* Н. Дибвойз, Политическая история Парфии, СПб, 2008, *էջ 206.* А. Бокщанин, Парфия и Рим, ч. II, Москва, 1966, *էջ 265։*

[35] *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...., Երկեր, հտ. Բ., էջ 42–53.* Ա. Գարագաշեան, *Քննական պատմութիւն Հայոց, էջ 259–260.* Յ. Աստուրեան, *Քաղաքական վերաբերութիւններ...., էջ 114–124. «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Ա., էջ 780–782. «Հայ ժողովրդի պատմություն», ԵՊՀ հրատ., էջ 63–64 եւ այլն։*

[36] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԿԴ., էջ 196–198, աշխարհբ.՝ 1990, էջ 127–128։*

առաջին գահակալությունը ենթադրաբար 140–143 թթ. միջեւ ճանաչելու պատճառ չունենք, երբ գոյություն ունի Սուրբ Սուքիասյանց վկայաբանության ուղղակի տեղեկությունն այն մասին, որ Անտոնինոս Պիոս կայսրը թագ եւ ծիրանի է ուղարկել Տիրանին։ Անտոնինոս Պիոսի դրամները համահունչ են վկայաբանության այս հաղորդմանը, եւ նրանց վրա պատկերված է Տիրանը, որի թագ ստանալը Հռոմից դարձել է Պերոզի՝ դեպի Հայաստան արշավանքի պատճառը։ Ավելին՝ վկայաբանության մյուս հաղորդումը, թե Պերոզը հետ քաշվեց, երբ նրան հասավ կայսեր սպառնալիքը, հաստատում է Կապիտոլինուսը՝ ասելով, որ միայն նամակով Անտոնինոս կայսրը հետ պահեց պարթեւ թագավորին հայերի վրա հարձակումից։ Սուրբ Սուքիասյանց վկայաբանության հաղորդածը, Անտոնինոս կայսեր դրամները եւ Կապիտոլինուսի տեղեկությունը միմյանց հետ այնքան ներդաշնակ են, որ ենթադրության տեղ չեն թողնում։ Ըստ այդմ, առանց հայ պատմիչներին դիմելու, վկայաբանության եւ հռոմեական հիշյալ տեղեկություններով հայոց գահին 140–143 թթ. տեսնում ենք Արտաշեսի Տիրան որդուն։ Տվյալ դեպքում էական է նաեւ, որ վկայաբանությունը նախորդում է հայ պատմիչների գործերին եւ անկախ է նրանցից։

ԱՐՏԱՇԵՍԻ ՈՐԴԻ ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հունահռոմեական աղբյուրների համաձայն՝ 161–166 թթ. պարթեւահռոմեական պատերազմի ժամանակ հետ մղելով Ասորիք հասած պարթեւական ուժերին՝ հռոմեացիները ներխուժել են նաեւ Հայաստան, եւ Սոհեմոսը Հռոմի կողմից բարձրացվել է հայոց գահին՝ կրկին թագավորելով[37]։ Ըստ Մովսես Խորենացու՝ նույն պատերազմի ժամանակ հայոց Տիգրան թագավորն ստիպված է եղել դաշնակցել պարթեւական թագավորի հետ եւ գերվել է հռոմեացիներից, իսկ հետո կայսերակից Լուկիոս Վերոսի կողմից կրկին բարձրացվել է հայոց գահին[38]։ Ակնհայտ է օտար աղ-

---

[37] *Տե՛ս* Юлий Капитолин, Марк Антонин Философ, IX, 1, Вер, VII, 1, «Властелины Рима», М., 2006, *էջ 557 եւ 575.* Кассий Дион, Римская история (книги LXIV–LXXX), LXXI, 3, 1, СПб, 2011, *էջ 153–154. հմմտ. «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», հտ. 9-րդ,* Դիոն Կասսիոս, LXXI, 3, 1, *Երեւան, 1976, էջ 215.* Фотий, Мириобиблион, 94, Ямвлих, Вавилонская повесть, «Поздняя греческая проза», Москва, 1961, *էջ 188.* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...., Երկեր, հտ. Բ., էջ 42–53.* Յ. Մարկվարտ, *էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն, «Հանդէս Ամսօրեայ», 1906, թիվ 2, էջ 37, ծանոթ. 3։*

[38] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԿԴ., 1913, էջ 196–198, աշխարհբ.՝ 1990, էջ 127–128։*

բյուրների եւ Մովսես Խորենացու հաղորդումների ներդաշնակությունը՝ բացառությամբ Սոհեմոս եւ Տիգրան անունների. այն է՝ նույն պատերազմի ժամանակ հռոմեացիների կողմից հայոց գահին է բերվում մեկը, որն այդ գահին բարձրանում է երկրորդ անգամ։ Հակառակ տեղեկությունների այս ընդհանրությանը, ըստ ընդունված տեսակետի, Սոհեմոսը համարվում է Էմեսայի (Հոմս) իշխանական տան ներկայացուցիչ, քանի որ այդ անունով Ա. դարում հիշված է Էմեսայի վերջին թագավորը։ Ենթադրվում է, որ Կապադովկիական թագավորական ընտանիքի հետ կապված Էմեսայի իշխանական տունը կարող էր նաեւ հայ Արշակունիների հետ կապված լինել, եւ Սոհեմոսը, 164 թ. գահակալելով Հայաստանում, այստեղ է ստացել Տիգրան անունը։ Հարց է ծագում՝ այդ դեպքում որտեղ է նախապես Սոհեմոսը թագավորել, եթե 72 թ. հետո Էմեսայի թագավորությունը վերացված էր, իսկ Հայաստանում նրա գահակալությունը 164 թ. հիշված է որպես կրկին գահակալություն։ Արդեն տեսանք, որ Սոհեմոսի առաջին գահակալությունը չի կարող կապվել Անտոնինոս Պիոսի կողմից հայոց թագավորին 140-ականների սկզբին թագ ուղարկելու՝ այդ կայսեր դրամներով մատնանշվող իրողության հետ, որովհետեւ այն, համաձայն Սուքիասյանց վկայաբանության, տրվել է Տիրանին։ Կա նաեւ տեսակետ, որ 164 թ. եղել է Սոհեմոսի առաջին գահակալությունը, իսկ Տրդատ նախարարի ապստամբությունից հետո երկրորդը՝ 172 թ.[39]։ Ենթադրության կարիք, սակայն, չկա, երբ հարցի պատասխանը Մովսես Խորենացու երկում է. 161—166 թթ. պատերազմից հետո Հայաստանում Հռոմի կողմից կրկին գահ է բարձրացվել ոչ թե օտար մեկը, այլ հայոց թագավոր Տիգրանը, եւ հարկ է մտորել, թե ինչ հանգամանքներում է նա ստացել Սոհեմոս անունը։

161—166 թթ. պարթեւահռոմեական պատերազմի եւ Հայաստանի հետ կապված դեպքերի առնչությամբ Մովսես Խորենացին հիշատակում է Մարկոս Ավրելիոս կայսերը գահակից, հռոմեական Արեւելքում կառավարիչ կարգված Լուկիոս Վերոսին, որը, ըստ պատմիչի, Հայաստան է ուղարկել պատերազմի սկզբում գերված հայոց Տիգրան թագավորին։ Հռոմեական աղբյուրները Հայաստանի հետ կապված հիշում են զորավար Ստատիոս Պրիսկոսին, որը ներխուժել է Հայաստան եւ գրա-

[39] Հ. Դոդդի եւ Ա. Պրեմերշտայնի այս տեսակետի մասին տե՛ս Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 246—247։

վել Արտաշատը, եւ նրան հաջորդած Մարտիոս Վերոսին, որը գահին է բարձրացրել Սոհեմոսին (Տիգրանին)։ Մի դեպքում հիշատակված է կարգադրողը, մյուս դեպքում՝ կատարողները, որոնք ինքնակամ որեւէ մեկին իշխանության բերել չէին կարող, այլ առնվազն՝ Լուկիոս Վերոսի հանձնարարականով։ Վերջնական որոշումը կայացրել է Մարկոս Ավրելիոս կայսրը, ինչպես հաղորդում է Կոռնելիուս Ֆրոնտոն՝ Մարկոս Ավրելիոսի եւ Լուկիոս Վերոսի ուսուցիչը, ասելով, որ նա «նախընտրեց Հայաստանում թագավորությունը հանձնել Սոհեմոսին, քան թե Վաղարշին, իսկ Բակուրին զրկեց թագավորությունից»[40]։ Մովսես Խորենացին, սակայն, լրացուցիչ պատճառ ունի հատկապես Լուկիոս Վերոսին հիշելու, քանի որ հաղորդում է, որ նա Տիգրանին կնության է տվել իր ազգական[41] Ռոփիին (Ռուֆի)։ Ռոփիի որդիներից, որոնց Տիգրանը չցանկացավ արքայական Արշակունի ազգատոհմում գրանցել, սկիզբ է առել Ռոփյան նախարարական տունը, որը հետագայում հիշատակված է հայ մատենագրության մեջ, արձանագրված է հայկական նախարարական տները ներկայացնող «Գահնամակում», այդ տների ռազմական ուժերը ներկայացնող «Զորանամակում», վավերագրեր, որոնք վերագրվում են՝ առաջինը՝ Ե. դարին, երկրորդը՝ Է.[42]։ Դժվար թե Ե. դարում, երբ գրում էր Մովսես Խորենացին, Հայաստանում Ռոփյանները եւ այլք մոռացած լինեին Ռոփյանների՝ Բ. դարակեսին հայոց Արշակունի արքայական տանից սկիզբ առած լինելու մասին։

Սոհեմոսի՝ Արշակունի լինելու մասին ուղղակի վկայություն է Յամբլիկոս վիպագրի (Բ. դարավերջ) երկի հատվածը՝ պահպանված Փոտ (Փոտիոս) պատրիարքի (Թ. դ.) «Գրադարանում»։ Ըստ այդմ՝ Յամբլիկոսը ծաղկել է Սոհեմոսի օրոք, որը ա) Աքեմենյան Արշակունի է, թագավորել է՝ սերելով նույնպես թագավորած իր նախնիներից, բ) եղել է Հռոմի սենատի անդամ եւ հյուպատոս, գ) հետո կրկին դարձել է Մեծ Հայաստանի

---

[40] К. Тревер, Очерки по истории культуры древней Армении, Москва—Ленинград, 1953, с. 236.

[41] *Մովսես Խորենացու օգտագործած «մերձավոր» բառը գրաբարում ունի նաեւ ազգակից, արյունակից իմաստը. տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ., Վենետիկ, 1836, էջ 256։*

[42] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԿԴ., 1913, էջ 197, աշխրհբ.՝ 1990, էջ 127—128.* Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն, էջ 204 (գրբ.), 205 (աշխրհբ.).* Եղիշե, *Վարդանանց եւ հայոց պատերազմի մասին, Երեւան, 1989, էջ 390 (գրբ.), 391 (աշխրհբ.).* Ղ. Վրդ. Ալիշան, *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 431—432.* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, *էջ 249—250.* Բ. Հարությունյան, *Գահնամակի թվագրման հարցի շուրջ, ՊԲՀ, 1976, թիվ 2, էջ 57—72.* Գ. Սարգսյան, *Մովսես Խորենացու Նախարարական տոհմերի ցանկը, ՊԲՀ, 1996, թիվ 1—2, էջ 73—90։*

թագաւոր[43]։ Եթե կրկին է թագաւորել Մեծ Հայքում, ապա բնական է նախ եւ առաջ մտածել, որ անցյալում նույնպես Մեծ Հայքի թագաւորն էր, եւ, ինչպես ասված է, նրա նախնիներն էլ թագաւորներ էին։ Յամբլիկոսի վեպը վերապատմող Փոտը չի որոշակիացնում, թե որտեղ են իշխել Սոհեմոսի նախնիները, բայց սա պատճառ չէ նրանց այլուր փնտրելու։ Կարծում ենք, որ Յամբլիկոսը ցանկացել է առանձնակի կարեւորությամբ խոսել Սոհեմոսի ու նրա տոհմի մասին, շեշտել է Աքեմենյանների եւ Արշակունիների կապը եւ նպատակադրված չի նշել, թե որ երկրում են իշխել Սոհեմոսի նախնիները, քանի որ Արշակունիները իշխել են մի շարք երկրներում, այդ թվում նաեւ Հայաստանում։ Այս կերպ վիպագիր հեղինակը մեծարել է Սոհեմոսի Արշակունի նախնիներին, որոնք իշխում էին ոչ թե մեկ, այլ մի քանի երկրներում, մեծարել է նաեւ Սոհեմոսին, որի օրոք ինքն ստեղծագործել է։ Այնուհետեւ, ծագումով Ասորիքից (Սիրիա)[44] Յամբլիկոսը երբեք չէր շրջանցի Էմեսան, եթե Հայաստանի թագաւոր Սոհեմոսը պատկաներ Էմեսայի ասորական թագաւորական տանը։ Ավելին՝ Էմեսայի թագաւորական տունը (Սամպսիգերամյաններ) արաբական ծագումով ասորի հելլենականացած ընտանիք էր, որի հայտնի 7 իշխողներից 2-ը կրել են հենց Յամբլիկոս անունը։ Եւ եթե պետք է դատենք միայն անունով, ավելի հնարավոր է վիպագիր Յամբլիկոսի պատկանելությունը Էմեսայի թագաւորական տանը[45], ինչն ավելի կասկածելի է դարձնում, որ նա Սոհեմոսին, եթե վերջինս Էմեսայի իշխող տանից լիներ, Արշակունի անվաներ։ Եթե Էմեսայի իշխողներն ազգակցություն իսկ ունենային Արշակունիների հետ, Յամբլիկոսը, այնուամենայնիվ, նախ կնշեր Սոհեմոսի Էմեսացի լինելը, այնինչ նա շեշտել է նրա՝ Արշակունի եւ Մեծ Հայքի թագաւոր լինելը։

Իհարկե հարց է, թե ինչու է Մեծ Հայքի թագաւորը որոշ ժամանակ Հռոմում սենատոր եւ հյուպատոս եղել։ Հավանական պատասխանը հու-

---

[43] *Տե՛ս* Фотий, Мириобиблион, 94, Ямвлих, Вавилонская повесть, «Поздняя греческая проза», Москва, 1961, *էջ 188.* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...., Երկեր, հտ. Բ., էջ 42–43.* Յ. Մարկվարտ, *էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն, էջ 37, ծանոթ. 3։*

[44] *Փոտը վիպագիր Յամբլիկոսին բաբելոնացի է կոչում, սակայն համարվում է, որ նա ասորի էր՝ ծնված Ասորիքի Սգերիա քաղաքում, որոշ ժամանակ ապրել եւ ուսանել է Բաբելոնում. տե՛ս* «Большая Российская Энциклопедия», https://bigenc.ru/literature/text/4926529*։*

[45] *Վիպագիր Յամբլիկոսից մեկ դար հետո ապրած փիլիսոփա Յամբլիկոսի մասին հայտնի է, որ Ասորիքի Խալկիդա քաղաքից էր եւ ծագում էր նշանավոր ու հարուստ տոհմից, ենթադրվում է՝ Էմեսայի քուրմ կառավարիչների ընտանիքից։ Յամբլիկոս անունն իսկ հունարեն հնչողությունն է արամերեն* yu-mliku՝ *«նա թագաւոր է» արտահայտության, որն իբրեւ անուն է կիրառվել (տե՛ս* «Античная философия», Москва, 2008, *էջ 837–848)։*

շում է Մովսես Խորենացու հաղորդածն այն մասին, որ 161 թ. Հռոմի Անտոնինոս կայսեր մահից հետո պարթեւական Վաղարշ Բ. Պերոզի[46] պահանջով վերջինիս դաշնակցած հայոց թագավոր Տիգրանն արշավել է դեպի հռոմեական Ասորիք եւ Միջերկրայքի[47] կողմերում գերվել։ Հայոց թագավորին ազատելու Կորդուքի զորաջոկատի փորձն անհաջողության է մատնվել։

Հռոմեացիների կողմից Տիգրանի գերեվարումը պատճառ է հանդիսացել, որ պարթեւական թագավորը հենց պատերազմի սկզբում Հայաստանի գահին բարձրացնի նոր թագավորի՝ Բակուրին։ Վերջինիս մասին հայտնող Ֆրոնտոի հիշյալ տեղեկությունը չի հակասում, այլ լրացնում է Մովսես Խորենացու պատմածը։ Պարթեւ արքան իր գերված դաշնակցի փոխարեն Հայաստանում նոր թագավոր է կարգել։

Տիգրանի գերվելու (կամավոր թե ակամա), բայց ըստ էության Հռոմի կողմն անցնելու մասին Մովսես Խորենացու հաղորդածին ի նպաստ է նաեւ հռոմեական մեկ այլ տեղեկություն։ Դիոն Կասսիոսի (Բ.—Գ. դ.) հաղորդմամբ՝ զորավար Ավիդիոս Կասսիոսն Ասորիք ներխուժած պարթեւական թագավոր Վաղարշին քաջաբար դիմադրել է, եւ ի վերջո, քանի որ դաշնակիցները լքել են Վաղարշին, նրա նահանջելու ժամանակ հալածել եւ հետ է վանել մինչեւ Սելեւկիա եւ Կտեսիփոն (Տիզբոն)[48]։ Այսինքն՝ պարթեւ թագավորի նահանջը մեծ չափով պայմանավորված է եղել նրա դաշնակիցների հեռանալով։ Թեպետ պարթեւական թագավոր Վաղարշին լքած դաշնակիցներն անվանապես հիշված չեն, այս հաղորդումը նույնպես համահունչ է Մովսես Խորենացու տեղեկությանը, թե Տիգրանը, սկզբում լինելով պարթեւական թագավոր Վաղարշի դաշնակիցը, այնուհետեւ, ըստ էության, դաշնակից է դառնում Հռոմին եւ վերջինիս միջոցով կրկին հայոց գահին բարձրանում։ Իրավամբ, ո՞ր պետությունը կարող էր լինել գլխավոր դաշնակիցը, երբ պատերազմում էին Հռոմեական ու Պարթեւական տերությունները, եթե ոչ՝ նրանց միջեւ գտնվող Հայաստանը, որը, ինչպես պատմությունը բազմիցս վկայել է, ցանկության դեպքում իսկ չէր կարողանում չեզոք մնալ երկու հարեւան տերությունների գործերում։ Այս դեպքում էլ հայոց թագավոր Տիգրանը, անհանգս-

---

[46] *Ըստ Մովսես Խորենացու՝ Վաղարշ Բ. Պերոզը պատերազմի սկզբում մահացել է, եւ Հռոմի դեմ պատերազմը շարունակել է նրա որդին՝ Վաղարշ Գ.-ն։*

[47] *Միջերկրայք անվանվում էր երկու ծովերի միջեւ գտնվող Փոքր Ասիա թերակղզին, որը հարակից էր պատմական Հայաստանին։*

[48] *Տե՛ս* Кассий Дион, Римская история, LXXI, 2, 2—3, *էջ 153, հմմտ. «Օտար աղբյուրները....», հտ. 9րդ,* Դիոն Կասսիոս, LXXI, *2, 2—3, էջ 215։*

տանալով պարթեւական ներխուժումից իր երկիր, ստիպված է եղել միանալ Վաղարշ Բ.-ին եւ գերվել է հռոմեացիներից։

Ըստ Կ. Տրեւերի՝ նա պահվել է հատկապես Ասորիքում (Անտիոքում կամ մեկ այլ քաղաքում)[49]։ Այն, որ Սոհեմոս Տիգրանը 161—164 թթ. գտնվել է Ասորիքում՝ Հայաստանին մոտ, անուղղակի կերպով հաստատում է Դիոն Կասսիոսի հաղորդումը, որ պարթեւներին հետ մղելուց հետո Սոհեմոսին (Տիգրանին) Հայաստան վերադարձնելու համար հարակից Կապադովկիայի կուսակալ Մարտիոս Վերոսն է ուղեկցող զորաջոկատ ուղարկել Թուկիդիդեսի գլխավորությամբ՝ ինքը եւս մտնելով Հայաստան[50]։ Հռոմում կամ կայսրության այլ՝ Հայաստանից հեռու վայրում Տիգրանի գտնվելու դեպքում ուղեկցողները Հայաստանին հարակից Կապադովկիայից չէին գնա։

*Իրենց մոտ հայտնված հայոց թագավորին կնության տալով Ռոփիին՝ կայսերակիցներ Լուկիոս Վերոսը եւ Մարկոս Ավրելիոսը նրան շնորհել են հյուպատոսի աստիճան (կոնսուլ) եւ ընդունել Սենատում։ Սրանք մեծ շնորհներ չէին, որ տրվել են Մեծ Հայքի թագավորին։ Բացի այդ՝ կոնսուլությունն այս շրջանում կորցրել էր նշանակությունը եւ առավելաբար պատվավոր կոչում էր, քան իրական իշխանություն։ Կայսրերը նույն տարվա համար նշանակում էին կոնսուլական մի քանի զույգերի՝ լրացուցիչ (*suffekti*) կոնսուլների, եթե ընտրված կոնսուլներն ինչ-որ պատճառով չէին կարող պաշտոնավարել, բայց նաեւ՝ նրանց հետ զուգահեռ։ 161—164 թթ. համար ընտրված առաջին կոնսուլները պատմությանը հայտնի են, հետեւաբար, Տիգրանը կամ Սոհեմոսը եղել է ոչ թե ընտրված կոնսուլ, այլ գահակից կայսրերից նշանակված սուֆեկտ՝ լրացուցիչ կոնսուլ։ Որքան էլ անվանական՝ կոնսուլական ժամկետը (1 տարի) լրացնելն իրավունք էր տալիս լինել կառավարիչ՝ կուսակալ որեւէ նահանգում (պրովինցիայում) կամ շրջանում։ Կարծում ենք, որ կոնսուլության տարին լրանալուց հետո Տիգրանն իշխանության է կարգվել Էմեսայի շրջանում, որի վերջին թագավորը եւ կրել է Սոհեմոս անունը։ Այդ անունն էլ Ասորիքում տրվել է Տիգրանին, եւ դա առանց հիմքի չէր։ Մեկ դար առաջ Ներոն կայսրը, նախապատրաստվելով արեւելյան արշավանքի, 54 թ. Էմեսայի վերջին իշխան Սոհեմոսին էր հանձնել հայկա-*

---

[49] *Տե՛ս* К. Тревер, Очерки по истории культуры древней Армении, *էջ 235։*

[50] *Տե՛ս* Кассий Дион, Римская история, LXXI, 3, 1, с. 154. *հմմտ. «Օտար աղբյուրները...», հտ. 9-րդ,* Դիոն Կասսիոս, LXXI, *3, 1, էջ 215։*

կան Ծոփք նահանգի կառավարումը՝ այս առիթով շնորհելով նրան նաեւ թագավորի տիտղոս[51]։ Ոչ հեռու անցյալի այս հիշողությամբ Ասորիքում հայոց թագավոր Տիգրանին Սոհեմոս են կոչել, այսինքն՝ իրենց այն թագավորի անունով, որը, թեպետ կարճատեւ, իշխել էր նաեւ Հայաստանի մի մասում։ Տիգրանին տրված այդ անունն ավելի ընդունելի է եղել նաեւ հռոմեացիների համար, քանի որ Էմեսայի վերջին թագավոր Սոհեմոսը հավատարմորեն ծառայել էր Հռոմին։

Կարծում ենք նաեւ, որ Տիգրանը, նախքան հայոց գահին բարձրանալը, եղբոր՝ Տիրանի օրոք եղել է հայոց արեւմտյան կողմնապահը՝ Ծոփքի բդեշխը, ինչպես հետագայում անվանվել է կողմնապահը (կուսակալ)։ Այդ պաշտոնում իրենց հոր գահակալության ժամանակ կարգված էր Տիրանը, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին[52], իսկ Տիրանի գահ բարձրանալուց հետո չի բացառվում, որ այն վարել է Տիգրանը։

Ահա այսպիսի առնչակցությամբ Ասորիքում Տիգրանն ստացել է Սոհեմոս անունը։ Հռոմեական աղբյուրներն այդ անունով են նրան հիշատակել՝ չորոշակիացնելով, սակայն, թե նա ով էր, մինչդեռ Ա. դարում ապրած Սոհեմոսի մասին նշում են Էմեսայի թագավոր լինելը, թագավորի տիտղոսը Ներոն կայսրից ստանալը, հիշում են Սոհեմոսի նախորդ, նրա եղբայր Էմեսայի իշխան Ազիզին, նրանց հայր Սամպսիգերամ Բ.-ին։ Սա եւս փաստ է՝ վկայող, որ հռոմեացիները գերադասել են լռության մատնել Սոհեմոս Տիգրանի հայ Արշակունի, Հայաստանի օրինական գահակալը լինելու իրողությունը՝ շեշտելու համար, որ նրան գահ բարձրացրին Հռոմի կայսրերը (ինչպես եւ արտահայտված է Մարկոս Ավրելիոսի եւ Լուկիոս Վերոսի 163—164 թթ. դրամներում)։

Հռոմեական սահմանում հայտնված Տիգրան թագավորին Ռոփիին կնության տալը, Սենատի անդամ ճանաչելը, հյուպատոս (կոնսուլ) նշանակելը եւ Ասորիքի մի մասում իշխանության կարգելը քաղաքական ծրագիր էր, համենայն դեպս՝ գահակից կայսրերի մտածումը։ Պարթեւական պատերազմը հաղթությամբ ավարտելու դեպքում, եթե հաջողվեր, Հայաստանը կարող էին հռոմեական նահանգ դարձնել, եթե ոչ՝ Տիգրանի

---

[51] *Տե՛ս* Тацит, Анналы, кн. XIII, 7, «Сочинения», т. I, Ленинград, 1969, *էջ 226։ Արշավանքը պարթեւական թագավոր Վաղարշ Ա.-ի դեմ էր, որն իր եղբայր Տրդատին փորձում էր բարձրացնել հայոց գահին։ Ի վերջո, Տրդատ Ա.-ն դարձավ հայոց թագավոր, սակայն, Ներոն կայսեր համաձայնությամբ եւ նրանից թագ ստանալով։*

[52] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԾԳ., 1913, էջ 183—184, աշխրհբ.՝ 1990, էջ 119։*

հետ հայոց գահին կբարձրանար հռոմեացի թագուհի։ Մեր այս կարծիքին նպաստում է Ֆրոնտոյի՝ Լուկիոս Վերոսին ուղղված նամակը, որից հայտնի է դառնում, որ Սոհեմոսի՝ հայոց գահին կրկին ընտրությունը Հռոմում տարակուսանք է առաջ բերել, թե ինչու է գերադասելի համարվել նա եւ ոչ՝ Վաղարշը, կամ ինչու է հեռացվել Բակուրը[53]։ Սա խոսում է այն մասին, որ Սոհեմոս Տիգրանը հայոց գահին վերադարձվել է իրավիճակի թելադրանքով։ Նախ անդրադառնանք, որ հիշյալ Բակուրը եւ Վաղարշն առանց որեւէ հիմքի ենթադրվում են արքայազուններ պարթեւական Արշակունիների ճյուղից, ինչը տարակուսելի է. դեռեւս շարունակվող պատերազմի պայմաններում հռոմեացիները կարո՞ղ էին հարմար նկատել իրենց նվաճած տարածքում թագավոր կարգել թշնամու ընտանիքի անդամին։ Եթե պետք է ենթադրել, ավելի հավանական չէ՞ ընդունել, որ Բակուրը եւ Վաղարշը հայ Արշակունիներից են (օրինակ՝ Տիգրանի որդիները)։ Բայց ենթադրելու կարիք չկա, որովհետեւ կրկին կա Մովսես Խորենացու տեղեկություններին ներդաշնակող հռոմեական հիշատակություն։ Հայտնի է, որ հիշյալ Բակուրը, 164 թ. գահազրկվելով եւ Հռոմ տարվելով, համաձայն եղբոր համար իր գնած դամբարանի արձանագրության, ընդունվել է կայսրական ընտանիք եւ կրել Ավրելիոս անունը[54]։ Այս փաստը կարող է բացատրվել նրա ազգակցությամբ Տիգրանի հետ, որին, ըստ Մովսես Խորենացու, կայսերակից Լուկիոս Վերոսը կնության էր տվել իր մերձավոր Ռոփիին։ Նոր կնոջ միջոցով Սոհեմոս Տիգրանը դարձել է կայսերական տան անդամ, ինչպես եւ՝ նրա որդի Բակուրը։ Չէ՞ որ սա ավելի համոզիչ բացատրություն է, քան այն, որ Հռոմին թշնամի Պարթեւական տերության արքայական տան անդամ Բակուրն ինչ-ինչ ծառայության համար, որի մասին հիշատակություն չկա, ընդունվում է Հռոմի կայսերական ընտանիք։

Տիգրանի օրինակով նրա որդի Բակուրը նույնպես, ամենայն հավանականությամբ, պարթեւական թագավորին լքողների թվում է եղել եւ Հռոմի համար մնացել որպես ընդունելի թեկնածու հայոց գահի համար։ Բակուրի հայ Արշակունի լինելու մասին է խոսում նաեւ այն փաստը, որ երբ Արտաշատը նվաճած Ստատիոս Պրիսկոսը նրան հեռացրել է գա-

---

[53] Յ. Մարկվարտ, *էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն, էջ 34.* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...., երկեր, հտ. Բ., էջ 47։*

[54] *Տե՛ս* К. Тревер, Очерки по истории культуры древней Армении, *էջ 238.* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...., երկեր, հտ. Բ., էջ 49.* Յ. Մարկվարտ, *նշ. աշխ., էջ 38, ծանոթ. 2։*

հից, Հայաստանում ապստամբություն է բռնկվել Տրդատ նախարարի գլխավորությամբ։ Պրիսկոսին փոխարինած Կապադովկիայի կուսակալ Մարտիոս Վերոսն ստիպված է եղել օգնության կանչել կայսրությանը հպատակ հենիոքների թագավորին, որին Տրդատը սպանել է։ Հայաստան եկած Մարտիոս Վերոսը դժվարությամբ է կարողացել հանդարտեցնել երկիրը՝ ոմանց համոզելով ու սիրաշահելով, ոմանց Հռոմի ուժով սպառնալով ու ճնշելով[55]։ Այդպիսի ապստամբություն Հայաստանում չէր բռնկվի պարթեւ արքայազնի հեռացման համար, այլ վստահորեն՝ հայոց արքայազնի։ Նույնիսկ ապստամբությունը գլխավորած Տրդատին կայսրը չի հանձնարարել սպանել. ուղարկել է Բրիտանիա՝ անհանգստանալով Հայաստանում հնարավոր նոր հուզումներից։

Կ. Տրեւերն ապստամբության պատճառ է համարել Հայաստանը հռոմեական նահանգ դարձնելու հռոմեացիների փորձը[56]։ Այդ մասին կարելի է դատել Դիոն Կասսիոսի գործի հիշյալ հատվածի այն հաղորդումից, որ հռոմեացիներն Արտաշատի փոխարեն Նոր քաղաքը՝ լատիներեն Kaine polis-*ը (այժմ՝ Վաղարշապատ) մայրաքաղաք դարձրին եւ այնտեղ հռոմեական կայազոր տեղակայեցին։ Գտնված արձանագրությունները հաստատում են, որ հռոմեական կայազորն այստեղ ամրություններ է կառուցել։ Ամեն դեպքում, հայոց թագավոր Բակուրին (պետք է ընդունել՝ Տիգրան Սոհեմոսի որդուն) հեռացնելու պատճառով բռնկված ապստամբությունը ստիպել է, որ Հռոմում գործուն քայլեր ձեռնարկեն Տիգրան Սոհեմոսին Հայաստան վերադարձնելու համար, որի միջոցով հայկական գահին կբարձրանար հռոմեացի թագուհի։*

Գտնվել են նույն թողարկման պղնձե դրամներ, որոնցից մեկի (գտնված 2001 թ. Արտաշատում) վրա ընթերցվող գրության հիմքով Ռ. Վարդանյանը համարում է, որ այն հատվել է Լուկիոս Վերոսի գահակալության ժամանակ եւ պատկանում է հայոց թագավոր Տիգրան Սոհեմոսին։ Դրամի դիմերեսին պատկերված է հայկական թագով արքայի կիսադեմը՝ թագուհու կիսադեմի հետ, իսկ դարձերեսին՝ երկգագաթ Արարատ լեռը։ Ռ. Վարդանյանը կարծում է, որ 150-ամյա դադարից հետո դրամի թողարկումն Արշակունյաց Հայաստանում կարող էր կապված

---

[55] *Տե՛ս* Кассий Дион, Римская история, LXXI, *3,1 եւ* LXXII, *14, 2, էջ 154—155 եւ 165, հմմտ. «Օտար աղբյուրները....», հտ. 9րդ,* Դիոն Կասսիոս, LXXI, *3,1 եւ* LXXII, *14, 2, էջ 215, 216։*

[56] *Տե՛ս* К. Тревер, Очерки по истории культуры древней Армении, *էջ 228—234։*

լինել Հռոմի հետ դաշինքի վերահաստատման եւ Տիգրան Սոհեմոսի եւ Ռոփիի գահակալման հետ[57]։

Պատահական չէ, որ Մովսես Խորենացին նույնպես Նոր քաղաքը՝ հռոմեական Kaine polis *անունը, հիշատակում է 161—166 թթ. պարթեւա-հռոմեական պատերազմի դեպքերից անմիջապես հետո՝ ասելով, որ Տիգրանի որդի Վաղարշը (Վաղարշ Բ.), հաջորդելով հորը, մեծ պարսպով շրջապատել է հին Վարդգեսավանը եւ կոչել Վաղարշապատ՝ հավելելով «որ եւ Նոր քաղաք»[58]։ Այս նշումը պետք է հասկանալ «որը եւ (կոչվում էր) Նոր քաղաք», որովհետեւ Տիգրան Սոհեմոսի որդի Վաղարշը գահակալել է պարթեւահռոմեական հիշյալ պատերազմից հետո։ Կարող ենք կարդալ նաեւ՝ «որը եւ (կոչվում է) Նոր քաղաք», բայց միայն հասկանալով, որ Վաղարշապատ անվան հետ քաղաքի նախորդ՝ Նոր քաղաք անունը շարունակել է գոյատեւել։ Գուցե Մովսես Խորենացին բայը չի գործածել, որպեսզի այդպես էլ հասկանանք, այսինքն՝ Վաղարշապատը կոչվում էր եւ դեռ կոչվում է Նոր քաղաք՝ զուգահեռ Վաղարշապատ անվանը։*

Մեր կարծիքով՝ Տիգրան Սոհեմոսի որդի այս Վաղարշն է հիշված Ֆրոնտոյի վերոհիշյալ հատվածում եւ ոչ՝ պարթեւական թագավորի նույնանուն որդին, ինչպես ենթադրվում է, իսկ Բակուրը Տիգրան Սոհեմոսի ավագ որդին է եղել, օրինական թագաժառանգը, որին պարթեւական թագավորը Տիգրանի գերվելու պատճառով բերել էր հայոց գահին, եւ որին հեռացնելը հռոմեացիների կողմից (գուցե եւ Հայաստանը նահանգ դարձնելու նպատակով), ինչպես տեսանք, պատճառ է դարձել ապստամ-

---

[57] *Տե՛ս* Ռ. Վարդանյան, *Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 234—153։*

[58] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. Կե., էջ 199—200, աշխարհբ.՝ 1990, էջ 129։ Ընդունված տեսակետով՝ քաղաքի կառուցումը վերագրվում է Վաղարշ Ա.-ին, պետք է ասել՝ առանց որեւէ տեղեկություն որպես հիմք ունենալով, այլ մերժելու համար Թ. Մոմզենի այն կարծիքը, որ Արտաշատը նվաճած Պրիսկոսն է հիմնադրել Նոր քաղաքը՝ դարձնելով այն Հայաստանի մայրաքաղաք (տե՛ս* Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.— X V в. н. э.), Ереван, 1930, *էջ 91—93.* Յ. Ասատուրեան, *Քաղաքական վերաբերութիւններ...., էջ 214)։ Համաձայն Մովսես Խորենացու եւ Դիոն Կասսիոսի տեղեկությունների՝ հնագույն Վարդգեսավանը հիմնադրվել է Ք. ա. Զ. դ. եւ նույն անվամբ քաղաք է դարձել Ք. ա. Ա. դարում՝ Տիգրան Մեծի օրոք։ Ք. հ. 164 թ.՝ հռոմեական ժամանակավոր նվաճման շրջանում, Վարդգեսավան քաղաքը, հռոմեացիներից ամրացվելով, անվանվել է* Kaine polis — *Նոր քաղաք եւ դարձել Հայաստանի մայրաքաղաքն ու այդ անվամբ մնացել Տիգրան Սոհեմոսի երկրորդ գահակալության շրջանում։ Վերջինիս որդի Վաղարշ Բ.-ի կառուցապատումից հետո Նոր քաղաքը վերանվանվել է Վաղարշապատ՝ շարունակելով մնալ Հայաստանի մայրաքաղաքը մինչեւ Ք. հ. Դ. դարասկիզբ, երբ Խոսրով Գ.Կոտակ արքան (330—338 թթ.) մայրաքաղաք է դարձրել Դվինը։*

բության, ինչի արդյունքում եւ Տիգրան Սոհեմոսը կրկին հայոց գահին է բերվել։ Նրա որդուն՝ Բակուրին ընդունելով կայսերական ընտանիքում՝ Հռոմում հույս ունեին Տիգրան Սոհեմոսի եւ Ռոփիի որդիներին էլ տեսնել հայոց գահին, սակայն, ինչպես պատմահայրն է ասում, Տիգրանը, Հայաստան վերադառնալով, հրաժարվել է նրանց Արշակունի գրանցել, գուցե եւ՝ հայ նախարարների պահանջով։ Ապստամբությունը, որը Բակուրին հեռացնելու համար բռնկվել էր Հռոմի դեմ, նաեւ նպաստել է, որ Տիգրան Սոհեմոսը Հռոմի հետ դաշնակցությունը պահելով հանդերձ՝ վստահություն ունենա գահը փոխանցելու ոչ թե Ռոփիի որդիներին, այլ Վաղարշին, որին նույնպես, ըստ Ֆրոնտոյի, Հռոմում գահի հավակնորդ էին համարում, երբ Տիգրանը, այսպես ասած, պատվավոր գերության մեջ էր։

Այս քննությամբ տեսնում ենք, որ հայկական եւ հունահռոմեական տեղեկություններն ինչպես Արտաշեսի որդի Տիրան թագավորի, այնպես եւ մյուս որդու՝ Տիգրան թագավորի եւ վերջինիս որդիներ Բակուրի ու Վաղարշի, նաեւ նրանց ժամանակաշրջանի մասին միմյանց համադրելի են եւ ոչ՝ հակասող։ Ըստ այդմ՝ դեպի Հայաստան 140-ականների սկզբին տեղի ունեցած պարթեւական արշավանքի ժամանակ հայոց գահին տեսնում ենք Արտաշեսի որդի Տիրանին, իսկ 161–166 թթ. պարթեւահռոմեական պատերազմի դեպքերի հետ կապված՝ Տիրանի եղբայր Տիգրան Սոհեմոսին՝ կրկին գահակալած 164 թ.[59], ինչպես եւ՝ վերջինիս որդիներ Բակուրին եւ Վաղարշին, որոնցից առաջինը գահակալել է Հայաստանից Տիգրան Սոհեմոսի բացակայության շրջանում, իսկ երկրորդը՝ նրա մահից հետո։

Շարունակությունը՝ հաջորդիվ

[59] *Տիգրան Սոհեմոսի երկրորդ գահակալության 164 թ. ընդունվում է գահակից կայսրերի դրամների հիման վրա։ Հնարավոր է, որ նա, 164 թ. հռչակվելով հայոց թագավոր, Հայաստան է վերադարձել 166 թ., երբ Մարտիոս Վերոսը Հայաստան եկավ՝ փոխարինելով Ստատիոս Պրիսկոսին։*